ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Պատվիրատուն՝ ՀՀ մշակույթի նախարարությունը, ստորև ներկայացնում է իր կարիքների համար հրատարակման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված **ՀՀՄՆ-ՄԱԱՇՁԲ-17/16** ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում **2017 թվականի մայիսի 18-ին** կնքված **N «ՀՀՄՆ-ՄԱԱՇՁԲ-17/16»** ծածկագրով պայմանագրում **2017 թվականի դեկտեմբերի 14-ին** կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1: Պայմանագրի N 1 «Աշխատանքի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց» հավելվածով նախատեսված Հայ ազգային-ազատագրական շարժումների անոտացված մատենագիտության վերաբերյալ Հեղինակի կողմից մատենագիտական ցանկերում կատարված լրացուցիչ շտկումներով և փոփոխություններով պայմանավորված՝ Կատարողի կողմից առաջարկվել է երկարաձգել պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման՝ գրքի հրատարակման և հանձնման ժամկետը:

Փոփոխության նկարագրություն: Պայմանագրի N 1 «Աշխատանքի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց» հավելվածով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետի երկարաձգում մինչև 2018 թ-ի հունվարի 13-ը:

Փոփոխության հիմնավորում: ՀՀ կառավարության 2017 թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 56-րդ կետի 4-րդ և 6-րդ ենթակետեր:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Տաթևիկ Սուքիասյանին:

Հեռախոս՝ 011 58-51-78:

Էլ. փոստ՝ cultproject@mail.ru:

Պատվիրատու՝ ՀՀ մշակույթի նախարարություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N2

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ N «ՀՀՄՆ-ՄԱԱՇՁԲ-17/16» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «14» 12 2017 թ.

ՀՀ մշակույթի նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ս. Մուրադյանի, որը գործում է ՀՀ մշակույթի նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչական-արտադրական ՊՓԲԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Վ. Հովակիմյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, (երկուսը միասին այսուհետ «Կողմեր») կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1. Հիմք ընդունելով կողմերի միջև 2017 թվականի մայիսի 18-ին կնքված պետության կարիքների համար հրատարակման աշխատանքների կատարման պետական գնման N **«ՀՀՄՆ-ՄԱԱՇՁԲ-17/16»** պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.4-րդ կետը և առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017 թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 56-րդ կետի 4-րդ և 6-րդ ենթակետերով՝ Պատվիրատուն և Կատարողը համաձայնության են եկել Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

1.1.1 Պայմանագրի N 1 «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց» հավելվածում աշխատանքի կատարման ժամկետի ավարտը՝ **«15» դեկտեմբեր, 2017 թ.»** բառերը փոխարինել **«13» հունվար, 2018 թ.»** բառերով:

1.1.2 Պայմանագրի 4.1.1 կետում **«Պայմանագրի գնի 60 %-ը՝ 582 000 (հինգ հարյուր ութսուներկու հազար) ՀՀ դրամը»** բառերը փոխարինել **«Պայմանագրի գնի 100 %-ը՝ 970 000 (ինը հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամը»** բառերով:

2. Համաձայնագրի գործողության ժամկետը

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև Պայմանագրով սահմանված երկու Կողմերի պարտավորությունները լրիվ ծավալով ու պատշաճ կատարելու ավարտի ժամկետը:

2.2. Կողմերի միջև ձեռք բերված՝ սույն համաձայնագրին հակասող բոլոր նախկին պայմանավորվածությունները դադարում են գործել սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից կազմում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3.2. Կողմերի պատասխանատվությունը որոշվում է Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրությանը համապատասխան:

3.3. Սույն համաձայնագիրը կազմված է 2 (երկու) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ մշակույթի նախարարություն Հասցեն՝ 0010, ք. Երևան, Վազգեն Սարգսյան փող.3 Կառավարական տուն 2, հեռ.՝ 58-51-96, 58-51-78 ՀՎՀՀ 02508054, h/h 900011012862 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչությունում	ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչական-արտադրական ՊՓԲԸ Հասցեն՝ ք. Երևան, Բաղրամյան 24 գ, հեռ.՝ 58-18-23, ՀՎՀՀ 00015977, h/h 1510032078840100 «ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԿ» ԲԲԸ
_____ **Ս. Մուրադյան** (ստորագրություն)	_____ **Վ. Հովակիմյան** (ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.